

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ 70 ԱՄԵԱԿ

1999 Նոյեմբեր 20, Շարաք երեկոյին, Պատրիարքարանիս Սրբ. Թարգմանչաց Վարժարանի 70 ամեակի տօնակատարութեան առիթով, վարժարանի մշակութային ձեռնարկներու պատասխանատու վարիչ ՏԻՔ. Անուշ Նագգաշեանի ղեկավարութեամբ ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ տպաւորիչ հանդիսութիւն մը: Թարգմանչաց Վարժարանի աշակերտները մեներգով, խմբերգներով, արտասանութեամբ, վերապրեցան Ե. դարու Սահակ-Մեսրոպի Թարգմանիչներու սերունդին խանդավառութիւնը, ներկայացնելով անոնց գրական ստեղծագործութեանց եւ ազգային եւ հոգեւոր թանկագին ժառանգութեան ներշնչումը: Դաշնամուրի վրայ, երգերուն կ'ընկերակցէր Տիկիկ Նունէ Պօղոսեան:

Մեծ սեղանի մը վրայ բացուած գիրքի մը կերպարանքին տակ, բեմ բերուեցաւ գունագեղ կարկանդակ մը, եւ եօթանասուն մտմբու լուսավառութեամբ 70ամեակի տարեդարձի խրախնամքին առիթով, բոլոր ներկաները հիւրասիրուեցան, մասնակցութեամբ Միարանութեան անդամներուն, եւ նախագահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Բեմին յարդարումը, լոյսի խաղերով, գործն էր Միարանութեանս արուեստագէտ անդամներէն Ընծանուէր Արդ. Բարախանեանի: Իսկ յայտագրի բացման խօսքը կատարեց Թարգմանչաց Վարժարանի Հոգեշնորհ Տեսուչ Տ. Թէոդորոս Արդ. Զաքարեան, որ 1843ին պաշտօնապէս հաստատուած կրթական օճախին պատմական գարգացումը ներկայացուց, սերունդներու երախտագիտութիւնը յայտնելով բոլոր ուսուցիչներուն, կրթական մշակներուն, տեսուչներուն, որոնք նուիրումով եւ գիտակցութեամբ վառ պահեցին «Լուսոյ Վառարան» Սրբոց Թարգմանչաց Վարժարանը, եւ սերունդէ սերունդ փոխանցելու հայ հոգեւոր ժառանգութեան գանձերու վայելքը եւ աննահանջ հայու հոգին:

Ն. Գ.